ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ

28 հոկտեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2022թ. հոկտեմբերի 28-ի նիստում քննարկեց Վ. Ա.-ի՝ դատախազների թեկնածությունների ցուցակում և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ եզրակացություն տալու հարցերը:

Հաշվի առնելով ստուգման արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի N 1 հավելվածի 26-րդ կետով, ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 9-րդ և 13-րդ ենթակետերով, **Հանձնաժողովը**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Վ. Ա.-ին դատախազների թեկնածությունների և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: